ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով սպորտային գույքի (սեղանի թենիսի սեղաններ, սեղանի թենիսի ձեռնաթիակներ) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 29.12.2021թ. ժամը 15:00-ին էլեկտրոնային գնումների e-auction համակարգի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Գիլոյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Եղոյան /գնահատող/

Անահիտ Կարապետյան /գնահատող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Կարինե Բաղալյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	«Սպորտ Սիթի» ՍՊԸ

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

3.1 ԷԱՃ-ի Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

2/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	
		«Սպորտ Սիթի» ՍՊԸ
		Վերջնական Առաջարկված գինը, ՀՀ դրամ

		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	19500000	19156500	19156500
2	1800000	1742400	1742400

4. **Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

4.1 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Սպորտ Սիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

4.2 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Սպորտ Սիթի» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը և հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ հայտում բացակայում է հավելված 1-ը՝ դիմում հայտարարություն էլեկտրոնային աճուրդին մասնակցելու վերաբերյալ, հավելված 1.2-ը՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը, և ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում է հրավերով պահանջվող ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

5. Գնահատման գործընթացի կասեցման մասին

5.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **«Սպորտ Սիթի» ՍՊԸ**-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 4.2 կետում արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

5.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2022թ հունվարի 10-ին, ժամը 14:30-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 611 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 10.01.2022 թ. ժամը 14:30-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Գիլոյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Եղոյան /գնահատող/

Սուսաննա Ղազարյան /գնահատող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Կարինե Բաղալյան

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

6. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

6.1 «Սպորտ Սիթի» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

7. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ.

7.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակցից ընտրված մասնակից ճանաչել **«Սպորտ Սիթի» ՍՊԸ** -ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

8.Գնահատման արդյունքների մասին

8.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ առանց անգործության ժամկետ սահմանելու, ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Կարեն Գիլոյան /նախագահ/

_____ Հարություն Եղոյան

_____ Սուսաննա Ղազարյան

_____ Կարինե Բաղալյան /քարտուղար/